

## ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ- 90

Պատերազմ է, բնական է, որ ամեն ինչի պակասություն կա. ուտելիքի, հագնելիքի... տաքության: Ու ես ոտնաման չունեմ: Կարգին ոտնաման չունեմ, էդ պատճառով էր, որ անձրեւը ինձ թվում էր, թե ի հեճուկս ինձ է թափվում, թե իմ անձնական թշնամին է՝ դաժան ու անխիղճ: Ուզում է ինձ աշխարհից վերացնել: Իրականում, մի ամբողջ պատերազմ ու հետո էլ իմ ոտքերը թաց էին: Էս մեր ժամանակներում ինձ ո՞վ կհասկանա, հիմա ո՞վ է բոբիկ որ...

Կռիվս մորս հետ, որ մի անգամ եմ արել, բայց եւ այնպես, իմ կողմից ստորություն էր նրան երեսով տալը, թե. «Պապան չասա՞ց, որ էրեխեքի ոտները չոր կպահես»:

Մայրս մեղավորի պես գլուխը կախեց, լուռ մնաց: Ասենք, ինքը ոչ էդքան փող ուներ /ո՞ր մեկի համար/, ոչ էլ խանութներում կոշիկ կար: Զգիտեմ, գուցե եւ կար, բայց մե՞զ ինչ...

Հայաստանի ազգային գրադարանի բեմից Սոս Սարգսյանի «Ոտնամաններս» ստեղծագործությունը Համազգային թատրոնի դերասաններն են ներկայացնում: Բազմիցս ընթերցած ու վերընթերցած ստեղծագործությունը նրանց կատարմամբ, թամանյանական մասնաշենքի մեծ դահլիճում այլ հնչեղություն է ստանում: Չ'է որ վարպետը Ազգային գրադարանի լավ բարեկամն ու հավատարիմ ընթերցողն էր, հաճախ է հյուրընկալվել նաեւ այս դահլիճում: Հին օրերի մասին լուսանկարներն են հիշեցնում, որ վարպետի գրած գրքերի, նրա մասին հոդվածների, ամսագրերի ու այլ նյութերի հետ ցուցափեղկերում են:

«Ոտնամաններս» ստեղծագործությունը Սոս Սարգսյանի ամենավերջին պատմվածքն է: Գրում էր հիվանդանոցում», - նշում է վարպետի կինը՝ Նելլի Սարգսյանը, ու ավելացնում, - «Շատ ուրախ եմ, որ Սոս Սարգսյանի հոբելյանը նաեւ Ազգային գրադարանում է նշվում, որ դահլիճն այսքան մարդաշատ է, որ նա այսքան սիրված է»:

Թատերական մոտեցումներով ընթերցանությանը ելույթներ են հետեւում: Վարպետի մասին հիշողություններ են պատմում ընկերները՝ Աբգար Ափինյանը, Վանուշ Շերմազանյանը... Խոսքերը հաջորդում են իրար՝ կենդանացնելով վարպետի կերպարը:



գրադարանի դահլիճը լեփ-լեցուն է, դա նշանակում է, որ ճիշտ ուղով ենք գնում:



Միջոցառումից հետո հյուրերը չեն շտապում հեռանալ: Վարպետի մասին հիշողությունները շարունակվում են թեւաձեւ փոքր ցուցասրահում: Անվանի դերասանի մասին շատ պատմություններ լսած տարբեր դպրոցների աշակերտները, Սոս Սարգսյանի արվեստի սիրահարները, գրադարանի ընթերցողները վարպետին փնտրում ու գտնում են նաև գրքերում: